ԿՅԱՆՔ ՏՈՒ՛Ր ՀՈՂԻՆ

Նպատակ

Կանխել ծայրահեղ աղքատությունն ու գործազրկությունը Լոռի Բերդ համայնքում, նպաստել գյուղատնտեսության զարգացմանն ու բնակիչների կյանքի որակի բարձրացմանը:

Գործողություններ

Լոռու մարզի 9 գյուղերն ապահովել գյուղատնտեսական տեխնիկայով, որոնցից կարող են օգտվել այդ համայնքի ծայրահեղ խոցելի սոցիալական պայմաններում ապրող 1490 ընտանիք:

Ծրագրի նկարագրությունը

Լոռու մարզը երկրորդ ամենաաղքատ մարզն է Հայաստանում, որի Լոռի Բերդ համայնքն ամենաաղքատն է մարզում: Համայնքն իր մեջ ներառում է 9 գյուղ՝ Ագարակ, Բովաձոր, Լեջան, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ և Լոռի Բերդ, որտեղ ապրում են 1490 ընտանիք (5967 բնակիչ):

Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում շատ են անմշակ հողերը, իսկ խորհրդային տարիներից չթարմացված սակավաթիվ տեխնիկան չի բավականացնում մշակվող հողերը սպասարկելու համար:

Այս ծրագիրը մեծ օգնություն կլինի Լոռի Բերդ համայնքի համար: Բնակիչները հնարավորություն կունենան վարձակալել անհրաժեշտ տեխնիկան և մշակել սեփական հողը: Իսկ ստացված բերքը նրանք կարող են վաճառել և եկամուտ ձեռք բերել:

Համայնքի ղեկավարը պարտավորվել է արդար կերպով վերահսկել ընտանիքների միջև ժամաքանակի բաշխման գործընթացը, որպեսզի բոլորն էլ կարողանան օգտվել տեխնիկայից:

Տարածաշրջանի բնական պայմանները բարենպաստ են կարտոֆիլ և հացահատիկ աճեցնելու համար: Մինչդեռ անմշակ հողերը տարիների հետ ավելի անպիտան են դառնում:

Անհրաժեշտ տեխնիկայով ապահովումը կնպաստի համայնքի գյուղատնտեսության զարգացմանն ու սոցիալական վիճակի բարելավմանը: Այս աջակցությունը կօգնի կանխել արտագաղթի մեծ հոսքը, որը սկսվել է և շարունակվում է նաև ծայրահեղ աղքատության և գործազրկության բարձր ցուցանիշի պատճառով: Իսկ աշխատասեր և հայրենասեր լոռեցիները այդ ճանապարհն են ընտրում անելանելությունից դրդված:

Այս խնդիրը չէր կարող անտարբեր թողնել Այո-ի թիմին: Մենք ուզում ենք աջակցել այս համայնքին ոտքի կանգնել և բռնել առաջընթացի ուղին, քանզի ներուժն անսահման մեծ է, իսկ արդյունքը՝ չափազանց կարևոր: Եվ դա իրականանալի է, իրականանալի ՝ մեր և Ձեր աջակցության շնորհիվ:

Միացի՛ր մեզ և ասա՛ Այո՛ համայնքների զարգացմանը:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ
Տրակտոր MT3-82.1	1	8,800,000Դ
Հացահատիկի շարքացան	1	2,640,000Դ

Փոխարժեքը 2018-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 1 ԱՄՆ դոլար = 480

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **11,440,000Դ**